ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԱԳՆ ՊԱԾ-ՄՀԾՁԲ-05/12

ք. Երևան

«05» դեկտեմբեր 2022 թ.

ՀՀ ԱԳՆ Պետական արարողակարգի ծառայությունը, ի դեմս ծառայության պետի տեղակալ Կ. Իսրայելյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մյուզիք Հոլլ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 15545930 (տասնհինգ միլիոն հինգ հարյուր քառասունհինգ հազար ինը հարյուր երեսուն) ՀՀ դրամ, :

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **9** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի դրույթները տարածվում են կողմերի միջև 2022 թ. հոկտեմբերի 20-ից ծագած հարաբերությունների վրա:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կատարող**
ՀՀ ԱԳՆ Պետական արարողակարգի ծառայություն Ք. Երևան, Վ.Սարգսյան 3 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011024941 ՀՎՀՀ 02545976 Պետի տեղակալ՝ Կ. Իսրայելյան (ստորագրություն) Կ.Տ.	«Մյուզիք Հոլլ» ՍՊԸ ք. Երևան Դրոյի 51 «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ Հ/Հ 16048344294500 ՀՎՀՀ 00916706 Տնօրեն՝ Գ. Գասպարյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
«05» դեկտեմբեր 2022 թ. կնքված
ԱԳՆ ՊԱԾ-ՄՀԾՁԲ-05/12 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						Հասցեն	Ժամկետը
1	98391160/1	**ԵԱՏՄ միջկառավարական խորհրդի շրջանակներում Հյուրասիրություն 300 անձի համար 20-21.10** 1. Խոզի ֆիլե թթու վարունգով և բուլղարական պղպեղով - 120 բաժին 2. Չորիզո սվիթ չիլի սոուսով – 120 բաժին 3. Պաշինա գազարով – 120 բաժին 4. Ռոկֆոր ընկույզով և խաղողով – 120 բաժին 5. Կամաբեր ելակով – 120 բաժին 6. Հոլանդական չերրի լոլիկով – 120 բաժին 7. Ֆետա ավոկադոյով և օրեգանոյով – 120 բաժին 8. Բրուսկետա խամոնով և տրավոժնի պանրով– 150 բաժին 9. Բրուսկետա Մոցարելլա չերի լոլիկով և պեստոյով - 150 բաժին 10. Բրուսկետա բանջարեղենի գրիլով և մոցարելա պանրով – 150 բաժին 11. Վարունգով քամած մածունով – 150 բաժին 12. Բուրգեր տավարի մսով – 200 բաժին 13. Կրուասան սենդվիչ – 300 բաժին 14. Քլաբ սենդվիչ հավով և բեկոնով – 300 բաժին 15. Կարկանդակներ հավով, տավարի մսով, կարտոֆիլով – 300 բաժին 16. Մանր խմորեղեններ – 300 բաժին 17. Սեզոնային մրգի տեսականի - 12 բաժին **Հյուրասիրություն 80 անձի համար 20-21.10** 18. Հավի կրծքամիս սալորաչրով և սմբուկով - 60 բաժին 19. Կամամբեր ելակով - 60 բաժին 20. Ռոկֆոր խաղողով և ընկույզով - 60 բաժին 21. Չորիզո սվիթչիլի սոուսով - 60 բաժին 22. Ֆետա ավոկադոյով և օրեգանոյով – 60 բաժին 23. Խամոն տվարոժնի պանրով և թզով	դրամ	15545930	1	ք. Երևան, Պարոնյան 40 Դվին համալիր	20-21.10.2022թ.

		– 100 բաժին 24. Բրուսկետա բանջարեղենով – 100 բաժին 25. Գրիսինիով պրոշուտո - 80 բաժին 26. Սյոմգա ավոկադոյով և պանրով – 80 բաժին 27. Սյոմգա ավոկադոյով և պանրով – 80 բաժին 28. Սև շավաշով սպրինգ ռոլլ –70 բաժին 29. Ռուլետ լավաշով – 70 բաժին 30. Ցեզր աղցան բաժանմներով – 60 բաժին 31. Սպանախով ռոլլ – 60 բաժին 32. Մանր խմորեղեններ – 80 բաժին 33. Միրգի տեսականի – 4 բաժին 34. Խոզի խորոված փայտիկներով – 60 բաժին 35. Հավի խորոված փայտիկներով – 60 բաժին 36. Բլինչիկ – 60 բաժին **Հյուրասիրություն 100 անձի համար 21.10** 37. Բրուսկետա բանջարեղենով – 200 բաժին 38. Բրուսկետա պանրով և ոլոռով – 180 բաժին 39. Բրուսկետա սյոմգայով և ավոկադոյով – 200 բաժին 40. Բրուսկետա խամոնով և թզով – 200 բաժին 41. Քլաբ սենդվիչ հավով և բեկոնով – 200 բաժին 42. Բուրգեր տավարի մսով – 200 բաժին 43. Տակով հավով և լոբիով – 200 բաժին 44. Լավաշի ռոլլ թարխունով և պանրով – 200 բաժին 45. Վարունգ քամած մածունով – 200 բաժին 46. Սև շավաշով սպրինգ ռոլլ – 160 բաժին 47. Մանր խմորեղեններ – 160 բաժին 48. Միրգի տեսականի – 4 բաժին 49. Խոզի խորոված փայտիկներով – 100 բաժին 50. Հավի խորոված փայտիկներով – 100 բաժին 51. Բլինչիկ – 100 բաժին **Քաղցրի Հյուրասիրություն և ձևավորում 20-21.10** 52. Թխվածք կաթնաշոռով – 450 հատ 53. Փախլավա – 80 հատ 54. Գաթա կլոր – 20 հատ 55. Նուռ – 20 բաժին 56. Արքայախնձոր – 20 բաժին 57. Դեղձ – 20 բաժին 58. Խնձոր – 20 բաժին 59. Սալոր – 21 բաժին 60. Ելակ – 12 բաժին 61. Թուզ – 20 բաժին 62. Տանձ – 10 բաժին 63. Մալինա – 3 բաժին 64. Խաղող նախատեսված նաև դեկորի համար – 215 բաժին 65. Պնդուկ – 5 բաժին 66. Ընկույզ – 5 բաժին 67. Հնդկական ընկույզ – 5 բաժին 68. Նուշ – 5 բաժին 69. Չամիչ 5 բաժին 70. Պիստակ – 5 բաժին 71. Թթու լավաշ – 5 բաժին 72. Թզի չիր – 7 բաժին					

		73. Ծիրանաչիր – 7 բաժին 74. Սալորաչիր – 7 բաժին 75. Մանգոյի չիր – 3 բաժին 76. Դեղձի չիր – 7 բաժին 77. Տանձի չիր – 5 բաժին 78. Սուջուխ քաղցր – 15 բաժին **Հյուրասիրություն 70 անձի համար** 79. Սաղմոնով կրուասան – 70 բաժին 80. Ռոլ հորդի մսով – 70 բաժին 81. Բլիթներ խոզապուխտով – 70 բաժին 82. Մոցարելա լոլիկով – 70 բաժին 83. Ծովախեցգետնի կարկանդակ – 70 բաժին 84. Արանչինի – 70 բաժին 85. Չամոսա հավով և ծովախեցգետնով – 70 բաժին 86. Սպրինգ ռոլ ֆետա պանրով և սպանախով – 70 բաժին 87. Ռոքֆոր տանձով – 70 բաժին 88. Կարկանդակ դանդուրով – 70 բաժին 89. Խոզապուխտ գրիզինի – 70 բաժին 90. Բազուկ, բալ և սերուցքային պանիր – 70 բաժին 91. Կիտրոնով մերենգա – 70 բաժին 92. Օպերա – 70 բաժին 93. Շու – 70 բաժին 94. Վարդի կարկանդակ – 70 բաժին 95. Մրգեր – 70 բաժին 96. Կրուասան հատապտուղներով – 70 բաժին 97. Ախթամար կոնյակ 0.7 լ. – 2 հատ 98. Վան Արդի սպիտակ գինի – 6 հատ 99. Վան Արդի կարմիր գինի – 6 հատ **Հյուրասիրություն 28 անձի համար** 100. Մարինադ տնական – 4 բաժին 101. Մարինացված ձիթապտուղ – 5 բաժին 102. Ծովախեցգետին կոկոսի և լիչիի թանձրուկով – 6 բաժին 103. Կեսար աղցան հավով – 6 բաժին 104. Սփրինգ ռոլ ծովախեցգետնով – 6 բաժին 105. Բաո բադով – 6 բաժին 106. Տեպանյակի բաջարեղենով – 4 բաժին 107. Հորդի Ռիբեյ բանջարեղենով – 4 բաժին 108. Գառան պարանոց կարտոֆիլի խոյսով – 5 բաժին 109. Աղցան հորդի մսով – 1 բաժին 110. Ախթամար կոնյակ 0.7 լ. – 1 հատ 111. Վան Արդի սպիտակ գինի – 2 հատ 112. Վան Արդի կարմիր գինի – 2 հատ 113. Սուրճ – 20 բաժակ 114. Թեյ – 18 բաժակ 115. Զովացուցիչ ըմպելիք – 60 հատ **Հյուրասիրություն 110 անձի համար** 116. Սենդվիչ Կրոկ Միսյե – 110 բաժին 117. Սաղմոնով կրուասան – 110 բաժին 118. Խոզապուխտով կրուասան – 110 բաժին 119. Շոկոլադե կրուասան – 110 բաժին 120. Նուշի կրեմով կրուասան – 110 բաժին 121. Բլիթներ պանրով և նանայով – 110 բաժին 122. Գաթա – 110 բաժին 123. Փախլավա – 110 բաժին 124. Խոզապուխտով ռոլ – 110 բաժին 125. Հունական աղցան – 110 բաժին 126. Դոլմա – 110 բաժին 127. Արանչինի – 110 բաժին					

		128. Հավով կրոկետ – 110 բաժին 129. Սպրինգ ռոլ ֆետա պանրով և սպանախով – 110 բաժին 130. Մոցարելլա լոլիկ կանապե - 110 բաժին 131. Չամոսա հավով և ծովախեցգետնով - 110 բաժին 132. Բանանով համեմված հաց – 110 բաժին 133. Շոկոլադի համով հաց – 110 բաժին 134. Կոկոսի թխվացք – 110 բաժին 135. Սուրճ – 110 բաժակ 136. Թեյ – 110 բաժակ 137. Աղբյուրի ջուր – 55 շիշ 138. Գազավորված ջուր – 55 շիշ 139. Զովացուցիչ ըմպելիք – 99 շիշ **Հյուրասիրություն 110 անձի համար** 140. Ազնվզմորու մակարոն – 200 բաժին 141. Կարամելային մակարոն – 200 բաժին 142. Վարդի կարկանդակ – 200 բաժին 143. Պավլովա – 100 բաժին 144. Շու – 200 բաժին 145. Մրգի կանապե – 184 բաժին 146. Թեյ - բաժակ 147. Սուրճ - բաժակ 148. Աղբյուրի ջուր – 220 շիշ 149. Գազավորված ջուր – 220 շիշ 150. Զովացուցիչ ըմպելիք – 220 շիշ **Բարում հյուրասիրություն** 151. Աղբյուրի ջուր – 72 շիշ 152. Գազավորված ջուր – 13 շիշ 153. Սուրճ Ամերկանո – 41 բաժակ 154. Սուրճ Կապուչինո – 4 բաժակ 155. Սուրճ Էսպրեսսո – 16 բաժակ 156. Կոկա կոլա – 37 շիշ **Դիզայն** 157. Սեղանների ձևավորում 158. Գլխավոր Սեղանի ձևավորում					

Պատվիրատու ՀՀ ԱԳՆ Պետական արարողակարգի ծառայություն Ք. Երևան, Վ.Սարգսյան 3 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011024941 ՀՎՀՀ 02545976 Պետի տեղակալ՝ Կ. Իսրայելյան (ստորագրություն) Կ.Տ.	**Կատարող** «Մյուզիք Հոլլ» ՍՊԸ ք. Երևան Դրոյի 51 «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ Հ/Հ 16048344294500 ՀՎՀՀ 00916706 Տնօրեն՝ Գ. Գասպարյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 2
«05» դեկտեմբեր 2022 թ. կնքված
ԱԳՆ ՊԱԾ-ՄՀԾՁԲ-05/12 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գումարը ներկայացված է աճողական կարգով ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	98391160/1	ԵԱՏՄ միջկառավարական խորհրդի շրջանակներում Պաշտոնական ճաշ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	15545930	15545930

Պատվիրատու	Կատարող
ՀՀ ԱԳՆ Պետական արարողակարգի ծառայություն Ք. Երևան, Վ.Սարգսյան 3 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011024941 ՀՎՀՀ 02545976 Պետի տեղակալ Կ. Իսրայելյան (ստորագրություն) Կ.Տ.	«Մյուզիք Հոլլ» ՍՊԸ ք. Երևան Դրոյի 51 «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ Հ/Հ 16048344294500 ՀՎՀՀ 00916706 Տնօրեն՝ Գ. Գասպարյան (ստորագրություն) Կ.Տ.